Ինչո՞ւ է լռում ԳԱԱ-ն

Այսօր, երբ ժողովուրդը՝ ներառյալ մտավորական կոչվածները, դուրս են եկել օտարալեզու կրթության դեմ, փաստորեն, Հայ Առաքելական Եկեղեցու դիրքորոշմանն է հետևում, այսինքն՝ խուլ ու համր է ձևանում նաև գիտության տաճար կոչեցյալը, որն ի պաշտոնե հանդիսանում է ՀՀ կառավարության խորհրդատուն:

Որտեղ է հայ ժողովրդի ազգային արժեք հորջորջվող Գիտությունների ազգային ակադեմիան իր Լեզվի, Գրականության, Պատմության, Արևելագիտության, Ցեղասպանության և վերջապես՝ Սոցիոլոգիայի և Փիլիսոփայության ինստիտուտներով: Որտեղ են Հայաստանի քաղաքացիների հաշվին բարգավաճող և իրենց անվանի գիտնական ներկայացնող տիտղոսավորները: Ինչո՞ւ չեն խոսում ազգի սերուցքի տիտղոսին հավակնողները: Թե՞ ՀՀ ԳԱԱ-ն է ՀՀ կառավարության նախաձեռնության հեղինակը որպես պաշտոնական խորհրդատու: Թե՞ տարիքն առած մարդիկ են ու պարզապես վախենում են «երիտնժդեհականից»՝ օրապահիկից զրկվելու պատճառով: Իսկ միգուցե դեռևս չե՞ն կողմնորոշվել: Իսկ չէ որ, ինչպես Հելվեցիոսն է ասում. «Կան ժամանակներ, երբ լռությունը դավաճանություն է»:



Բագրատ Խերոբ
ՀՀ ԳԱԱ գիտաշխ